



ՊԱՏԻՎ ՈՒՆԵՄ



ՀԻՄՆԱՎՈՐ ԳԻՏԵԼԻՔՈՎ ԴԵՊԻ ԱՐԺԱՆԱՊԱՏԻՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

Թիվ 6(37), 30 հունիսի, 2021թ.

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՅԱՍԱԼԻՐԻ ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ

ՀԱՆԴԻՍԱՎՈՐ ԱՐԱՐՈՂՈՒԹՅՈՒՆ



Կրթահամալիրի պետ, ոստիկանության գեներալ-մայոր Մ.Բաբայանը, կրթահամալիրի պետի առաջին տեղակալ Ս. Մարկոսյանը, ուսումնամեթոդական և զարգացման վարչության պետ Գ. Գևորգյանը, ակադեմիայի ղեկավարությունը: Շնորհավորանքի խոսքով հանդես եկան ոստիկանության գեներալ-մայոր Մ.Բաբայանը, ոստիկանության գնդապետ

Գ.Գրիգորյանը, ոստիկանության փոխգնդապետ Ռ.Մարանդյանը: Շրջանավարտների անունից շնորհակալական խոսք ասաց ոստիկանության ավագ լեյտենանտ Զ.Կարապետյանը:

ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ողջ անձնակազմը շնորհավորում է մագիստրոսներին՝ մաղթելով մասնագիտական մեծ հաջողություններ:



2021 թ. հունիսի 9-ին ՀՀ ոստիկանության կրթահամալիրում տեղի ունեցավ կրթահամալիրի ակադեմիայի մագիստրատուրայի առկա ուսուց-

ման 2020-2021 ուսումնական տարվա շրջանավարտների դիպլոմների հանձնման հանդիսավոր արարողությունը: Ներկա էին ՀՀ ոստիկանության

ՀԱՊԿ ՀԵՐԹԱԿԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄ ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՅԱՍԱԼԻՐՈՒՄ



համապատասխան ծառայությունների ղեկավարները, Բելառուսի ՆԳՆ ներքին գործերի, Ղրղզստանի, Ռուսաստանի ներքին գործերի նախարարությունների, Տաջիկստանի նախագահին առընթեր՝ թմրանյութերի վերահսկման գործակալության և ՀԱՊԿ քարտուղարության ներկայացուցիչները: Հյուրերին դիմավորեցին ՀՀ ոստիկանության ղեկավար կազմը և Կրթահամալիրի պետ,

ոստիկանության գեներալ-մայոր Մ. Բաբայանը, որը նրանց ծանոթացրեց Կրթահամալիրի կառուցվածքին և ուսումնական ծրագրերին: Հյուրերն այցելեցին նաև ՀՀ ոստիկանության պատմության թանգարան:

Նիստի մեկնարկին ՀՀ ոստիկանության պետի տեղակալ Վարդան Մովսիսյանը ողջունեց ներկաներին ու մաղթեց արդյունավետ աշխատանք:



Հունիսի 1-ից 3-ը ՀՀ ոստիկանության կրթահամալիրում անցկացվեցին ՀԱՊԿ արագ արձագանքման հավաքական ուժերի հատուկ նշանակության կազմավորումների ներգրավմամբ «Գրոմ-2021» հատուկ զորավարությունների նախապատ-

րաստման շտաբային բանակցությունները: Մասնակցում էին ՀՀ ոստիկանության պետի տեղակալ Վարդան Մովսիսյանը, ՀՀ պաշտպանության և արտակարգ իրավիճակների նախարարությունների, ոստիկանության և ԱՄԾ

ՆՈՐ ԺՈՂՈՎԱԾՈՒՒ ԾՆՈՒՆԴ



Լույս է տեսել Կրթահամալիրի ուսումնամեթոդական և զարգացման վարչության պետի տեղակալ, ինքը և ուսումնական գործընթացի կազմակերպման և վերահսկման բաժնի պետ, ոստիկանության գնդապետ Կարինե Կիրակոսյանի «Ամրոց իմ լեռներ» բանաստեղծությունների ժողովածուն:

Կ. Կիրակոսյանի ստեղծագործությունների թեման հիմնականում հայրենիքն է, հայրենի բնությունը, հայրենիքը պաշտպանող զինվորը: Ժողովածուում պարզ ու բնական զգացմունքներով ու զույներով արտահայտված են բնությունը, թախիծն ու ոգևորությունը: Յուրաքանչյուր բանաստեղծություն նրա հոգու անկեղծ թրթռն է՝ հարիր նրա ներաշխարհին ու բնավորությանը: Չնայած մասնագիտությամբ պայմանավորված խստապահանջությանն ու անզիջուն բնույթին՝ անասելի քնքուշ, զգայուն և զգացմունքային ներաշխարհի ունի հեղինակը, ինչն էլ շռայլորեն դրսևորվել է նրա պոեզիայում:

Հատկապես հայրենասիրությամբ տոգորված նրա բանաստեղծությունները յուրահատուկ մոնումենտալ կոթողներ են, որոնք իրենց ուրույն տեղը կզտեն սերունդների ազգային դաստիարակության գործում:

Շնորհավորում ենք ոստիկանության գնդապետ Կ. Կիրակոսյանին անդրանիկ ժողովածուի կապակցությամբ և բարենաղթում նորանոր հաջողություններ, ստեղծագործ ու արգասավոր գրիչ:

Ռ. Մուսաբեյան

ՊԱՏԻՎ ՈՒՆԵՍ



Յուրեն ավելի քան մեկ տարի առաջ սկսեց ծավալվել նաև Հայաստանի Հանրապետությունում, նոր խնդիրներ առաջադրեց պետության և Ոստիկանության համար: Եվ հիմնական գործող ինստիտուտը, որը զբաղվում է հակահամաճարակային կանոնների պահպանության ապահովմամբ, Հայաստանի Հանրապետության ոստիկանությունն է: Մենք գործ ունեցանք մի իրավիճակի հետ, որով, ըստ էության, ոստիկանության գործերը նախկինում էլ զբաղվել: Այսինքն սա լրացուցիչ մի աշխատանք էր, որը Ոստիկանությունն ստիպված էր կատարել:

Հետո վրա հասավ աղետալի և ողբերգական 44-օրյա պատերազմը, որին ոստիկանության գործերի ծառայողները շատ ուղիղ և գործուն մասնակցություն ունեցան՝ մարտնչելով ողջ ճակատի երկարությամբ, աչքի ընկնելով իրենց սիրաբանությունով, բայց, ցավով, 43 ծառայողներ նահատակվեցին հանուն Հայրենիքի, հանուն մեր լինելիության: Այդ նախադեպը չունեցած պատերազմում մի քանի տասնյակ ոստիկաններ ծանր վիրավորում ստացան և հաշմանդամ դարձան:

Շնորհակալություն՝ ոստիկանության ողջ համակարգին, ոստիկանության գործերի այն ծառայողներին, որոնք պատասխանատվությամբ, պատրաստակամությամբ և հպարտությամբ ստանձնել են հայրենիքի սահմանների պաշտպանությունը թշնամու ամեն տեսակ ոտնձգություններից:

Շնորհակալություն՝ նաև ոստիկանության գործերի ծառայողների ընտանիքների անդամներին, նրանց կամակամորթներին, նրանց երեխաներին, որոնք, համոզված են, սիրով և հպարտությամբ են իրենց զավակներին, ամուսիններին, հայրերին ճանապարհում ծառայության:

Սիրելի՛ բարեկամներ, սիրելի՛ եղբայրներ, ես ձեզ բարի, անփորձանք և հաղթական ծառայություն են մաղթում՝ համոզված լինելով, որ դուք այդ ծառայությունը կիրականացնեք պատվով և հաղթական:

Շնորհավոր տոնդ, ոստիկանության գործեր, շնորհավոր տոնդ, խիզախ ու անկոտորում ոստիկան:

Ռ. Մուսաբեյան
լեզուների ամբիոնի դոցենտ,
ոստիկանության գնդապետ

ԱՐՅԱՆՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ - ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆԻՅ

Մ.թ.ա. 6-րդ դարում երվանդ Սակավկյացը հիմնադրում է առաջին համահայկական պետությունը, որի մեջ միավորվում են հայալեզու բոլոր գավառները: Նույն դարում այն դառնում է Արեւմտյան պետության սատրապությունը, ապա՝ կիսվում է իրավասային ու հարավային հատվածների: Արցախը մտնում է Հյուսիսային Հայաստանի կազմի մեջ, որի կենտրոնը երբեմնի ամրոցն էր: Արցախի նախարարական տունը, ըստ ավանդության, սերում է Հայկ Նահապետի ժառանգ Սիսակից: Նախարարական տան նախահայրը եղել է Հայկազուն Առանը, որի անունից էլ առաջացել է հարստության «Առանջահիկ» (նշանակում է Առանի տիրակալ) անվանումը: Ալեքսանդր Մակեդոնացու՝ մ.թ.ա. 334 թվականին սկսված արշավանքներից հետո երվանդունիների թագավորությունն անկախանում է: Այդ ժամանակ Արցախը և արևելյան հարևան Ուտիքը մտնում են հայկական պետության մեջ: Այդ մասին են փաստում հույն պատմագիր և աշխարհագիր Ստրաբոնի վկայությունները, որտեղ նա Արցախը ներկայացնում է որպես Մեծ Հայքի կազմում գտնվող նահանգ՝ «Օրխիստինա» անվանմամբ: Տիգրան Բ Մեծ արքան (մ.թ.ա. 95-55) այստեղ կառուցել է իր ամունը կրող քաղաքներից մեկը՝ Արցախի Տիգրանակերտը (հնավայրը Ակնա քաղաքի շրջակայքում է, պեղումները՝ 2006 թվականից):

Մ.թ. 66 թվականից Արշակունյաց հարստության շրջանում Արցախը նույնպես գտնվում էր հայկական միասնական պետության կազմում: Այդ մասին է վկայում հռոմեական կայսր Ներոնի ժամանակներից Հռոմում պահպանված պատի վրա փորագրված աշխարհի մարմարե քարտեզը, որտեղ Արցախն Արշակունյաց Հայաստանի առաջատար նահանգներից մեկն է: Մինչև 6-րդ դարի կեսերը Արցախ աշխարհում տևական խաղաղություն և ինքնավարություն էր տիրում: Սակայն ամեն ինչ փոխվեց 7-րդ դարի սկզբին, երբ Հայոց երկիր ներխուժեցին արաբները: 652 թվականին հայոց սպարապետ Թեոդորոս Ռշտունին Ասորիքի և Վերին Սիջագետքի կառավարիչ Մուսավրայի հետ պայմանագիր ստորագրեց, որով Հայաստանը պահպանեց իր ներքին ինքնավարությունը: Սակայն Սեբեոսի վկայությամբ՝ բանակցություններում Հայաս-



տանն առանձին էր դիտարկվում Սյունիքի և Արցախից: Իրավիճակը փոխվեց Թեոդորոս Ռշտունու մահից հետո, երբ գահին անցավ նրա փեսային՝ Համազասպ Մամիկոնյանին: Նրան հաջողվեց իր իշխանության տակ վերցնել Մեծ Հայքի գրեթե բոլոր գավառները, այդ թվում և Արցախը:

Ամեն ինչ փոխվեց 11-րդ դարում՝ սելջուկ-թուրքերի արշավանքների հետևանքով: Տուրքիլ բեկի կառավարման տարիներին սելջուկ-թուրքերն ավերեցին Հայաստանի կենտրոնական, արևմտյան և հարավային շրջանները, սակայն Արցախը դեռ շարունակում էր անվճար մնալ: 1064 թվականին սելջուկ-թուրքերի մեծաքանակ գործերը՝ Ավիարալանի գլխա-

վորությամբ, սրի ու գերության մատնեցին արցախահայությանը: 12-րդ դարի սկզբներից, սելջուկ-թուրքերի կայսրության քայքայմանը զուգընթաց, հզորանում էր Վրաց թագավորությունը: Հայ ժողովուրդը, մնալով սելջուկ-թուրքերի գերիշխանության տակ, էլի համակերպվում այդ կացության հետ. հայերին անհրաժեշտ էր Վրաստանի օգնությամբ թրթափել սելջուկ-թուրքերի լուծը: Հայ-վրացական միացյալ ուժերի կողմից ազատագրվում են հայկական տարածքները, այդ թվում նաև Արցախը:

1221 թվականին Կոստան գետի մոտ տեղի ունեցած ճակատամարտում հայ-վրացական միացյալ ուժերը պարտություն կրեցին, որից հետո մոնղոլներն սկսեցին ասպատակել Հայաստանն ու Վրաստանը: Երկրորդ արշավանքի ժամանակ թաթարներին հաջողվեց գրավել նաև Արցախը: 1386 թվականին թուրքմենների առաջնորդ Լենկ-Թեմուրը, գրավելով Թավրիզը, անցնում է Արաքսը և մտնում Սյունիք, իսկ այնուհետև նրա գործերը ներխուժում են Արցախ, գրավում Վերին և ստախեղ: Իրավիճակը փոխվեց Լենկ-Թեմուրի մահից հետո, երբ նրա հսկայածավալ պետությունն սկսվեց քայքայվել: 15-րդ դարում կարա-Կոյունլու տիրակալների իշխանության տակ հայերը համեմատաբար լավ վիճակում հայտնվեցին: Կարա-Կոյունլուները, գիտակցելով իրենց տիրապետության տակ ընկած երկրների քայքայված տնտեսության վերականգնման և պետական գանձարանը լցնելու կարևորությունը, համեմատաբար մեղմ քաղաքակա-

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԲԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԸ



Սույն թվականի հունիսի 4-ին տեղի ունեցավ ՀՀ ոստիկանության կրթահամալիրի գիտական խորհրդի 2021 թվականի 8-րդ նիստը: Օրակարգի հարցերի քննարկման արդյունքում գիտական խորհուրդը որոշեց լրացումներ և փոփոխություն կատարել «ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայում բակալավդի և մագիստրոսի կրթական ծրագրերով

ուսումնական գործընթացի կազմակերպման կարգ»-ում, հաստատեց ՀՀ ոստիկանության կրթահամալիր ՊՈԱԿ-ի «իրավագիտություն» մասնագիտության մագիստրոսի կրթական ծրագրի մասնագիրը և քննարկեց ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ուսխորհրդի 2020-2021 ուստարվա 2-րդ կիսամյակում կատարված աշխատանքների հաշվետվությունը:



ԱՐՅԱԽՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ - ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

2 նություն էին վարում հայ իշխանների նկատմամբ: Նրանք պետական բարձր պաշտոնների նշանակում էին հայ նախարարական անվանի տների որոշ ներկայացուցիչների և շատերին դարձնում իրենց նախկին տիրույթների տնօրեններ ու լիիրավ իշխաններ: Սույն իրավիճակն էր տիրում նաև Ակ-Կոյունլուների տիրապետության շրջանում: Այս ժամանակաշրջանում վերականգնվում են Ներքին խաչենի և Վերին խաչենի իշխանական տների ներկայացուցիչների իրավունքները: 14-15-րդ դարերում հայ նախարարական տների զգալի մասը կորցնում է իր ինքնավարությունը՝ այն զիջելով Հայաստանին տեր դարձած քոչվոր ցեղերի ավազանում: Չնայած դրան՝ Արցախի լեռնային գավառներում Առանջահիկների իշխանական տների առանձին ճյուղեր կարողանում են դիմակայել եկվորների ճնշումներին և պահպանել երկրամասի պետական ինստիտուտների կենսունակությունը: Այդ մասին է վկայում Կարա-Կոյունլու Ջևանշահի հրովարտակը, որով ճանաչվում է լեռնային Արցախի տեր մելիքների իշխանությունը: 16-17-րդ դարերում Հայաստանը դառնում է թուրք-պարսկական պատերազմների թատերաբեմ: 1555 թվականին պա-

տերազնող կողմերն Ամասիայում կնքում են հաշտության պայմանագիր, որով Հարավային Կովկասն անցնում է Պարսկաստանի գերիշխանության տակ: 16-րդ դարում պարսկապետական տարածքներում ստեղծվում են ռազմավարական երեք միավորներ՝ Շիրվանի, Չուխուր Սադի (Երևան և Նախիջևան) և Ղարաբաղի բեկլարբեկությունները: 1580 թվականին թուրք զորավար Մուստաֆա Լալափաշայի զորքերը ներխուժում են Ղարաբաղ, այնուհետև ավերում Երևանն ու հասնում Գեղարքունիք: Հայոց հողի վրա թուրք-պարսկական բախումները շարունակվում են մինչև 1639 թվականը՝ Կասրե-Շիրինում կնքված հաշտության պայմանագրի կնքումով: Պարսկաստանին են անցնում Հայաստանի արևելյան մահանգները՝ Գուգարքը, Շիրակը, Արարատյան դաշտը, Սյունիքը ու Արցախը և Վասպուրականի արևելյան հատվածը: Այդ ժամանակահատվածում, գտնվելով պարսկական տիրապետության տակ, Արցախի մելիքություններն ունեին ներքին ինքնավարություն և դրանով իսկ ստեղծում էին մի ինքնատիպ մշակույթի շարունակելի

Տիգրան Խաչատրյան
ոստիկանության կապիտան

ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՍՓՈՓԻՉ ՆԻՍՏԸ

2021 թվականի հունիսի 1-ին տեղի ունեցավ ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ուսանողական խորհրդի 2020-2021 ուստարվա երկրորդ կիսամյակի ամփոփիչ նիստը: Նիստին ներկա էին Կրթահամալիրի պետ, ոստիկանության գեներալ-մայոր Մ. Բաբայանը, Կրթահամալիրի պետի տեղակալ Մ. Մարկոսյանը: Բացման խոսքով հանդես եկան կրթահամալիրի պետն ու ուսանողական խորհրդի նախագահը, որից հետո ներկայացվեց նիստի օրակարգը: Օրակարգը ներառում էր հարցեր ինչպես պետական ատեստավորման քննություն-

ների, այնպես էլ ուսումնական գործընթացի վերաբերյալ: Նիստի ավարտին Կրթահամալիրի պետ Մ. Բաբայանն ուսանողական խորհրդին շնորհակալական խոսք հայտնեց կատարած արդյունավետ աշխատանքի համար: Ուսանողական խորհրդի նախագահ Սամվել Հակոբյանը նույնպես շնորհակալություն հայտնեց Կրթահամալիրի ղեկավար կազմին՝ վստահության և աջակցության, ուսանողական խորհրդի անդամներին՝ համատեղ աշխատանքի և միասին գրանցած արդյունքների համար:



ՆՈՐ ՈՒՍՈՒՄՆԱԳՈՐԾՆԱԿԱՆ ԶԵՆԱՐԿ

ՀՀ ոստիկանության կրթահամալիրի մեթոդական խորհրդի երաշխավորությամբ հրատարակվել է Ակադեմիայի քաղաքացիական իրավունքի և քաղաքացիական դատավարության ամբիոնի պետ, իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ Գ. Իսրայելյանի և Ա. Հարությունյանի համահեղինակությամբ «Հայաստանի Հանրապետության ընտանեկան իրավունք» վերտառությամբ ուսումնագործական ձեռնարկը: Ձեռնարկը բովանդակում է Հայաստանի Հանրապետության ընտանեկան իրավունքի ինստիտուտների վերաբերյալ խնդիրներ և թեստեր: Այն ներառում է նաև խնդիրների և թեստերի ճիշտ պատասխանները: Ձեռնարկը կարող են օգտագործել համապատասխան մասնագիտական կրթական ծրագիր իրականացնող ուսումնական հաստատությունների ուսանողները և դասախոսները:



ՀԵՏԱԲԵՐՔՐՈՇԱՐԺ ՊԱՏՈՒՐԱՆ

Աժխարհի ամենասարօրինակ օրենքները

Յուրաքանչյուր երկիր ունի իր մշակութային արժեքները և մտածողության առանձնահատկությունները, և այդ մշակութային և մտածողական տարբերությունները մեծապես ազդում են օրենքների վրա: Երբեմն այդ օրենքներից մի քանիսը հատում են ծիծաղելի սահմանը, իսկ մյուսներն իրենցից ներկայացնում են կարևոր մշակութային արժեքներ: Չեզ է ներկայացվում ամբողջ աշխարհի տարօրինակ օրենքներից մի քանիսը, որոնք, գուցե և չհավատաք, որ գոյություն ունեն:

Օրենք N1
Սինգապուրում անօրինական է մաստակ ծամելը: 1992 թվականից ի վեր Սինգապուրն արգելում է օգտագործել բոլոր մաստականման նյութերը, և ցանկացած անձ, որ ներմուծում, վաճառում կամ մաստակ է պատրաստում Սինգապուրում, կարող է տուգանվել և (կամ) բանտարկվել՝ բացառությամբ նիկոտինային և ատամնաբուժական մաստակների, որոնք առաջարկվում են բուժական նպատակներով:

Օրենք N2
Կանադական ռադիոկայաններով պետք է հնչեն միայն կանադացի երաժիշտների երգերը: Կանադացիներն այնքան հայրենասեր են, որ երկրի օրենքով պահանջվում է բոլոր կանադական ռադիոալիքներով, հատկապես աշխատանքային օրերին՝ առավոտյան 6-ից մինչև երեկոյան 6-ը, հնչեն հիմնականում կանադացի երաժիշտների կատարումները:

Օրենք N3
Գերմանիայում անօրինական է մեքենայի վառելիքի վերջանալը մայրուղու վրա: Գերմանիայում մայրուղիներում վարորդներին հնարավորություն է տրվում մեքենայի արագությունը գերազանցել ժամում 100 մղոն: Սակայն եթե մայրուղու վրա վերջացավ մեքենայի վառելիքը, ապա քեզ մեծ տուգանք է սպառնում: Իսկ ավելի մեծ է տուգանքի չափը, եթե համարձակվես ոտքով հասնել բենզալցակայան: Գերմանացիները կարծում են, որ եթե սպառվում է մեքենայի վառելիքը, ապա դա քո մեղքն է, քանի որ պատշաճ չես հետևում մեքենայի, բացի այդ, մայրուղում ոտքով քայլելը շատ վտանգավոր է: ▶ 4

